

գերն ոտքի ձայնը անխելի կ'ընէին, եւ ուր ալ աչքն ուղղուէր, անհասճածոյ աղետութիւն եւ ճաշակ կը նշմարէր:

Թխագոյն թաւաղով պատեալ թիկնաթուի մը վրայ բազմած էր տան տիկինը՝ որ քնքոյշ եւ գրասիւշ կերպարանք մ'ուներ: Բայց Արմանտ Ըւզէլքոյի երեսն աննշմարելի եղանակաւ կը կրէր այն զարհուրելի հիւանդութեան հետքն՝ որ որդի պէս մարմինն ի ներքուստ կ'ապականէ, մինչդեռ արտաքինն ըստ երեւութի կը զարգանայ:

«Արեւիկայէ հոս ես, Միքայէլ, ըսաւ քաղցրահնչեւն ձայնով: Այսօր զիս երկայն ատեն առանձին թողոցիր. այսօր դարձեալ զիս շատ տկար կը զգամ:»

«Կերէ՛, սիրելի, պատասխանեց կոմսը, իմ յանցանքովս էր, տեսական պարտքերս ինծի արգելք եղան:»

«Միքայէլ, զբեզ կուէլ տուի, վասն զի բեզի աղաչանք Թուրքի, մեծ աղաչանք մը. Միքայէլ, քովս ունենալ կ'ուզեմ՝ տղաս, զոր մնալքըդ քովն եմ թողած: Մարգիլուհիս աղաչանաց ունիլ դնելու չէի. մինչեւ որ որդիս բազկաց մէջ չզգամ, չեմ կրնար հանգչել:»

«Լաֆոն քաղաք կ'երթայ, ի՞նչ կ'ուզես. ըսաւ կոմսը, բայց չէ՛նք կրնար մինչեւ վաղը յապաղել: Փոթորկալեց գիշեր մը պիտի ունենանք:»

«Ճիշդ այս մտածութիւնս է, որ զիս կը նեղէ կը զարհուրեցնէ. վախէս կը մեռնիմ: Միքայէլ, կ'երգմենցուցանեմ զբեզ. Լաֆոնն Օրլէան մի՛ ղրկեր. քեզմէ լաւ եւ քաջ ձիավար գտնել՝ անհնար է. միայն քու բազկացդ մէջ որդիս ապահով կրնայ ըլլալ, դուն քաղաք գնա եւ զԼաֆոն ինծի բեր:»

«Արմանտ:»

Կոմսուհիս սպիտակ ձեռքն իշխանին իրեն մերձեցուց: «Վաղա՛ւեմ, Միքայէլ, ըսաւ. ասով զիս կը հանգստացնես: Բառմեկն երազ մը տեսայ քու բացակայութեանդ ժամանակ քնանալու միջոցն: Միայն որդիս տեսնելով կրնամ երազը մոռնալ:»

Ամուսնոյն առանց պատասխանելու ժամանակ տալու՝ կենդանութեամբ յառաջ տարաւ.

«Երազիս մէջ մեր Ալեքսիս այն մարդուն բազկացը մէջ տեսայ, որուն անունն առանց գողալու չեմ կրնար բերանս առնուլ: Ալեքսիս հետք՝ սեւաւ նժոյգի մը վրան էր նստած եւ շտապաւ կը սուրար գիշերային մթութեան մէջ: Մահկան սպիտակ զգեստին վրայ — կարմիր բիծ մը

նշմարեցի, որ արեան գոյն ուներ. — որուն աւրին էր, Միքայէլ:»

Սարսափահար կեցաւ եւ թաշկինակը բերանը մերձեցուց. կարմիրագոյն էր թաշկինակը բերնէն հեռացած միջոցն:


Ըւզէլքոյի գունատեցաւ: Բժշկէն ղնդուեալ գրութեան բովանդակութիւնն աչացն առնելու պատկերացաւ:

«Ամիջպակս ձիս համետել կու տամ, ըսաւ ոտք ելելով. քանի մը ժամ վերջը որդիդ կրնաս ընդգրկել: Հիւանդագահն կրնայ վաղը կաթով գալ:»

«Միշտ բարի եւ աղին ես, ըսաւ կոմսուհին սիրալիւր եղանակաւ:

«Աստուած զբեզ օրհնէ, սիրելիդ, եւ յաջողութեան ամեն ծաղկանց առատութեամբ բողբոջ ապ կենացդ շաւղին վրայ:»

(Ը-բ-ւ-ւ-իւ-իւ:)



ԱՅԼԵԹԵՐԵՐ

ՆԱԲԱԼՈՒՐԵ

Մորթիոյ պարսկի նոր դարման մը:

Այն մ'ըստ պատահման եռացեալ կաթը կը թափէ ձեռքին վրայ, Ցուէն կէս անգղայ՝ առանց դիտարկելու ընելըն, ձեռքերը կը մխէ ալիւրի արկէն մէջ, որ բաց էր: Եւ ահա ցաւն անմիջապէս կը մեղմանայ, Այնը քիչ մ'ետքը ձեռքը դուրս կը հանէ, եւ այնպէս ալիւրաթաթախ ձեռքը կը կապէ: Երկրորդ օրը ձեռքն այնպէս առողջացած էր բոլորովին, որ մէջ ցաւ եւ մէջ մարմնի ուռածք կը զգար:

Հետեւեալն Քարիզի ի Լոնտոն:

Բարիցի եւ Գալիէ մէջ կատարուած հեռաւայնական փորձերը լեւուի յաջողութիւն ունեցան: Ասկից վերջը թելերը Գալիէ-Ցուիթի թելերուն հետ պիտի կցին. որով Բարիցի Լոնտոնի հետ պիտի կապուի ուղղակի խօսակցելով: Եւ որովհետեւ կը կարծուի թէ թելը պիտի չպիտանայ, ուստի Բարիցի ի Լոնտոն հեռաւայնին համար թելը պարանոնի պիտի դրուին. ինչպէս ցայժմ Բարիցի ի Գալիէ հեռաւայնին համար պղնձ թել կը գործածուէր:

ՏՆՏԵՍՈՒՆՆ

Տղաց շարքս մի տար:

Շարքս թէ եւ առանձինն ուսուի, շատ կողմանէ փնտաւար է տղաց: Որչափ յաճախ կը արտնչեն մարք, թէ իրենց տղաքն առամբար

Թթուութիւն ունին: Բայց պէտք չեն զարմանալ ասոր, երբ ստեպ շաքար կու տան ուտելու: Եթէ կ'ուզեն մարք համարել՝ որ այս շաքարէն յառաջ կու գայ այն թթուին, ջրոյ մէջ քիչ մը շաքար խառնեն եւ խառնուրդը տաք տեղ մը դնեն: Նոյն եղանակով շաքարը բերնի եւ ստամոքսի մէջ մնալով՝ յառաջ կու գայ ստամոքսի թթուին: Հարարի սրեւէ լուծուածի էական յտուութիւնն է տղոց աղիւ եւ կակուղ ակունները փնայրել: Վասն զի շաքարը բերնի մէջ լուծուելով՝ թթու յառաջ կու գայ, որ թոյլ հետ ակունները կը չընկալուէ եւ կամայ կամայ՝ բայց ապահովապէս նոյնը կը կակոցեն եւ կը փռեցնեն: Եթէ է ասոր համարուիլ չ'ուզիր մկն, թող աւնու տղու ակունք մը, եւ գաւաթի մը մէջ ջրով քիչ մը շաքար լուծելով՝ ակունք մէջը ձգէ. քորի մ'որ ետքը կը տեսնէ, որ շաքարի թթուութիւնը զորութեամբն ակուն կակոցած է:

Ժմնած կարողը թարմ ընկնա կերպ:

Ծթնած կարողը խոր պնակի մէջ դնելով՝ վրան քիչ մը սովորական անոյշ կաթ (առանց շաքարի) կը լցնուի, ու զգալով այնպէս կը շարժուի որ կաթը կարագին հետ միշտ խառնուի, շարունակու ժամանակն է 2—10 րոպէ՝ կարագին քանակութեան համեմատ: Այսպէս շարունակելն վերջը՝ պնակի մէջ կաթն՝ որ ստասիկ կծու եւ անխորժ համ մ'առած կ'ըլլայ, դուրս կը թափուի, ու նոր կաթ լցնելով՝ դարձեւ կը շարժուի. սովորաբար երկու անգամ շարունակը բաւական կ'ըլլայ կարողը թարմ վիճակի բերելու:

Ապակեայ ջնարակ:

Եթէ կ'ուզեն ապակեայ ջնարակ պատրաստել, առ մանր փշուրած գաղի խէժ եւ հաւկթի ճերմկոյշ լուծէ: Այս ջնարակն կընայ օգտակարապէս զորածուրի ինչ ինչ դիպաց մէջ, բայց ի մասնաւորի երբ պատուհանի ապակին արտաքուստ անթափանցիկ ընել կ'ուզուի:

Թարմ հացին վնասակարողութիւնը:

Թարմ հացը՝ որ բազմաց մեծ հաճութիւն կը պատճառէ, անթարմ հացին պէտ օգտակար չէ: Արիկայ անկից կը ստուգուի որ՝ թարմ հացը սովորաբար լաւ չի կրնար շարժուիլ, Ստամոքսին ալ բաւական անուշ չի տաք, որովհետեւ ծամելու ժամանակ թանր զանգուած մը կը կազմէ. Թարմ հացը մարտնչութեան զործարաններուն մէջ խմորով՝ յառաջ բերելով՝ ամէն տեսակ հիւանդութեանց գուռ կը բանայ: Ստոյգ է թէ մարդկային մարմինն ամէն բանի կը վարժի, ինչպէս նաեւ թարմ հացին, բայց այս վերջինս հանդերձ առաւել ծախիքն՝ մարմնի կազմակերպութեան վրայ վնասակար հետեւութիւններ ալ յառաջ կը բերէ:

Գիշացան ռուսմողաց:

Աիկտոր Լաբորդ աշակերտաց զիւրջ ցաւուն պատճառն կը համարի բաց ի մտաւոր աշխատութեան՝ երկատարող եւ փափկակաղմ տղոց պաշտօնները: Երբ տղան ոչ լաւ ջնուցեալ դասասարանը կը մտնէ, գլուխը ջնրմով եւսն ճառա-

գայթնները յիւրն կը ձգէ, ուր որ ոտուքները կը մին օգ բանեղեն: Հուսով գլուխը ցաւելու կը սկսի, որ եւ իր ստատկանայ աշայ եւ զիւրջ յոգնելովն: Ուստի Լաբորդ հետեւեալ առաջարկութիւններն կ'ընէ. 1. խոցն աւելի ջնուցանել, 2. Աշակերտաց թոյլ տալ որ կաշեայ հողաթափաները հանելով ուրիշ տաքքրնոյ հողաթափաներ հագնին: 3. Ուսումը ստեպ ստեպ, բայց կարճ հանգստեամբ ընդմիջել: 4. Այս հանգստեան ժամանակ մարմնավարժութիւն ընել: 5. Երբ աշակերտը կը զգաս որ ոտուքնին մեղու կը սկսի, պէտք են խցն ելլել եւ շարժում ընել:

ՄԱՆԵՐԱԼՈՒԹԵՑ

Որչափ լրագիր կայ աշխարհքիս վրայ:

Այս հարցման պատասխանը բազմաց հետաքրքրական է: Ահագին շերտայ՝ եթէ 35.000 էր ընենք լրագրաց թիւը, Աշխարհքի բնակչաց թիւը մէկ միլիարտէն աւելի է. ուստի 28.600 հոգւոյ մէկ թիւը կ'իյնայ, Թէեւ յԱմերիկա լրագիր կարգադրելներուն թիւը Եւրոպայի համեմատութեամբ շատ աւելի է, սակայն Եւրոպան աւելի լրագիր ունի, որուն պատճառն բնակչաց առաւելութիւնն է:

Եւրոպական երկրներեւ մէջն լրագրի կողմանէ առաջինն է Գերմանիա իւր 5500 լրագրիւնովն, որոնց 800ն ամէնօրեայ է:

Անգղիան ունի 4000 լրագիր՝ 800ն ամէնօրեայ: Անգղիական լրագրիները՝ Գերմանիոյ լրագրաց հետ համեմատելով, կը տեսնենք որ առջիններն շատ աւելի օրինակ կը տպուին օրր. 4. օ. Telegraph 250.000 օրինակ, Standard՝ 242.000, Daily News՝ 160.000, Times՝ 100.000:

Գաղղիոյ լրագրաց թիւը գրեթէ կը համապատասխանէ Անգղիոյ լրագրաց, օրաթիւ երկը 760 են:

Չորրորդն է Իտալիան իւր 1400 լրագրովն, յորոց 160 օրաթիւերթ: Ի Ֆրանսիոյ՝ 200, Ի Միւլիոյ՝ 140, Ի Նեապոլիս՝ 120, Թուրին՝ 94, Ի Ֆիրենցիա՝ 79:

ՅԱւստրիա—Անշտարիա կը հրատարակուին 1200, օրաթիւերթ՝ 150:

Սպանիոյ լրագիրը 850 կը հաշուեն, որոնց երբորդ մասը քաղաքական է:

Ռուսիոյ լրագիրը 800է աւելի չեն. Ի Բելթերապոլի կը հրատարակուի 200 լրագիր, Ի Մոսկուա՝ 75: Ռուսական անուսման պետութեան բազմաշեղանկարապէրը Ի լրագիրս իսկ կը տեսնուի: Բազմաթիւ լրագիրը քանի մը լեզուաւ են, այսպէս՝ գերմաներէն—գաղղիերէն—ռուսերէն, գերմաներէն—ռուսերէն եւ այլն. 17.000 օրինակէ աւելի տպուող լրագիր չկայ:

Յունական լրագրաց թիւը լեզուի մըն է: Գողցեսն ամէն գիւղ մը կամ երկու թիւերթ ունի: Աթէնք կը հրատարակուին ամէն օր 54 լրագիրը: Հելլենիտիոյ լրագրաց պատկառելի թիւն է՝ 450:

Բելգիա եւ Հոլլանտա ունին 300ական լրագիր:

Հուլիս եւ Նոյեմբեր, Պանիս եւ Փարիս եւ կալ լրագրոյ կողմանէ աղքատ են:

Լրագրականնոր գործունէութիւն մը կը տիրէ ի Ցամախատան: Կ. Պոլսի միայն ունի 50 լրագիր՝ տաճիկերէն, գաղղիկերէն, հայերէն, անգլիսերէն եւ յունարէն լեզուս:

Աշխարհ յառանց ամենամեծը՝ Ասիա, միայն 3000 պարբերական հրատարակութիւն ունի, որոնց մեծ մասը կը հրատարակուին Այնդղիական Հնդկաստան եւ ի Ճաբոն: Զինաստանի մամուլը դեռ շատ նախնական վիճակի մէջ է: Պաշտօնական ֆինկֆոն թերթի որը երեք անգամ կը հրատարակուի՝ երեք անգամն ալ զատ զատ գունով թղթի վրայ: Զաբոն Եւրոպիոյ հետ կը մրցի իւր 2000 լրագրոյն: Զաբոնական լրագիրք վարէն վեր կը կարգացուին:

Ամերիկէի մամուլը շատ ողջալի վիճակի մէջ է: ՅԱւերիկայի հազիւ 200 լրագիր կը հրատարակուի՝ որոնց 30ը յեղիպտոս:

Ամերիկայի մամուլը շատ ծաղկած է: 1804ին ի լոյս տեսաւ Ամերիկայի առաջին Boston News առնուն թերթն ի Պոնթիոն, եւ այսօր Միացեալ-Նաւահայկաց լրագրոյ թիւն է 12,500 որոնց 1000ն առնուն օրեայ: — Հետաքրքրականն այս է որ 120 լրագիր հնդկիներէ կը խամբագրուի:

Հարաւային Ամերիկայի լրագիրներն ալ բազմաթիւ են:

ՅԱւսարալիա կը հրատարակուին 700 լրագիր ի Հոնոլուլու որ մոյրաբարդը եւ Սանտիէ կոչեաց, 8, որոնց 5ը անգլ. լեզուաւ եւ 3ը տեղացի բարբառով:

Եվսէ լրագիրներն իրենց լեզուն կողմանէ բաժնեւն ըլլանք, կ'առնենաք 16,500 անգլիկերէն հրատարակութիւնը, 7800՝ գերմաներէն, 6850՝ գաղղիկերէն եւ 1600՝ սպաներէն:

Անգղիոյ թղթատարողի ինքը յամիմ 1889 — 1890:

Անգղիական թղթատարութեան ընդհանուր պաշտօնէին վերջնա հրատարակած տեղեկագրէն կը քաղուի հետեւեալը:

Ապրիլ մէկէն (1889) մինչեւ Մայիս 31 (1890) ամբողջ Բրիտանիոյ մէջ՝ թղթատարութեան կողմանէ ջրուած էին.

1888—1889
աւելի

Սփորական նամակ՝	1.650,100.000 կամ 5-9%
Թղթատարական քարտէս՝ 217,100.000	7-8%
Կիւրք եւ շրջաբերականք. 441,900.000	1-3%
Լրագիր	159,300.000 4-8%
Ծրարք	42,850.000 8-2%

Մարգու գլուխ ինկած է.

Նամակ՝	43:5 հատ.
Թղթատարական քարտէս՝	5:7 »
Խաշակապք	16: »
Ծրարք՝	1:1 »

Օտար տէրութեանց եւ զաղմականութեանց առաքուեայն 973,807 ծրարք, անցալ տարի առաքուած էր 552,055. դրէն ու զաղմականութիւններէն եկած ծրարեւորն թիւն է 352,085, անցեալ տարուին 37,090 աւելի:

Յառնարարեալ (recommandé) նամակաց թիւն անցեալ տարուին 356-850 աւելի եղաւ. ընդ ամենն՝ 11,357,935:

Պատուիրագրիկներով՝ (4,448,423) փոխադրուած գրամը 42 միլիոն ողբերկն աւելի էր՝ անցեալ տարւան համամասութեամբ 3 միլիոն ողբերկն աւելի:

Թղթատարութեան ինայութեան արկը դրուած իրաց գինն 1889ին վերջը 62,999,620 սղերկն էր, կամ նախընթաց տարիէն 4,443,226 սղերկն աւելի:

Ընդ ամենն 62,403,399 հեռագիր եկաւ, մինչդեռ նախընթաց տարւան հեռագրաց թիւը 57,765,349 էր. ասկէ կը տեսնուի որ տեղական հեռագիրներն 8-5 առ հարիւր աճած են. օտար երկրէ կեղծերն՝ 8-1 առ հարիւր:

Թղթատարութեան զուտ շահն 1889—90 3,346,087 սղերկն է կամ նախընթաց տարուին 146,443 սղերկն աւելի:

Պաշտօնէից թիւը 61,054 է (անցեալ տարուին 2658 հազի աւելի). ասանդ 4348 կին է: Այս կարգաւոր պաշտօնեաներէ զատ 52,000 (որոնց 15,700ը կին է) հազի ալ կ'ընդ որ իբր ոչ-կարգաւոր պաշտօնեայ թղթատարութեան մէջ ծառայութիւն կ'ընեն:

Զմիռնիոյ վաճառքադարձ:

Զմիռնիոյ վաճառականութիւնն եւ հետեւաբար նաեւ քաղաքն մեծապէս կը յառաջագրիմ: Քաղաքին բնակիչքն են այժմ իբր 210,000 հոգի. ասոր դրեմէ կէսը (107,000) յոյն է, մէկ քաղաքը (52,000) մահմետական, իննբարդ մասը (23,000) հրեայ են. մնացեալք են Հայք (12,000), Իտալացիք (6,500), Գաղղիացիք (2,500), Աւստրիացիք (2,200), Անգլիացիք (եւ ի մանաւորի Մալթացիք, 1,500) եւն: Թէեւ նաւահանգիստն առաջով ըլլայ, սակայն միշտ շատ լաւ նաւահանգիստ է, մանաւանդ համառուօր ծովափունքը շինուելէն ի վեր: Զմիռնիոյ արտածութիւնն 1889ին եղաւ 91 միլիոն մարք, ներածութիւնն 65 միլիոն:



ՔԱՂԱՔԱՐԱՆ ԵՆՈՒԹԻՒՆ

Վիեննա, 28 Փետրուար 1891:

Ամուլոյ մէջ քաղաքական նշանաւոր դէպքն է Եւրոպիոյ նամար Իտալիոյ Էրիսփի պաշտօնէից զանքեցուն անկումը, որ երկրին դրամական ոյժերը սպառած էր իւր քաղաքականութեամբ: Էրիսփի տեղ Ռուտինի մարգիսն եղաւ զանքեց, եւ իւր կազմած պաշտօնարանը